

II

(Ոչ օրենսդրական ակտեր)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 24-Ի 2015/1185 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)

**«Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների
էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական
պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքին ներկայացվող էկոնախագծման
պահանջներ սահմանելու շրջանակ սահմանելու մասին» Եվրոպական
պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 2009/125/ԵՀ
հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

2009/125/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածում նշված խորհրդատվական ֆորումում
քննարկումներ անցկացնելուց հետո,

քանի որ՝

- 1) 2009/125/ԵՀ հրահանգով Հանձնաժողովից պահանջվում է սահմանել
էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ էներգասպառող այն
արտադրանքի համար, որն ունի վաճառքի եւ շրջանառության էական

¹ ՊՏ L 285, 30.10.2009թ., էջ 10:

ծավալներ, նշանակալից ազդեցություն է գործում շրջակա միջավայրի վրա եւ ունի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու զգալի ներուժ՝ չպահանջելով չափազանց մեծ ծախսեր.

- 2) 2009/125/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածով նախատեսվում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգի եւ 15(2) հոդվածով սահմանված չափորոշիչների համաձայն եւ Խորհրդատվական ֆորումում քննարկումներ անցկացնելուց հետո, Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում պետք է կիրարկումն ապահովող միջոցառումներ ներկայացնի ջերմոցային գազերի արտանետումների ծախսարդյունավետ կրճատման մեծ ներուժ ունեցող այնպիսի արտադրանքի համար, ինչպիսիք են պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչները.
- 3) Հանձնաժողովն իրականացրել է նախապատրաստական վերլուծություն բնակելի եւ առևտրային շենքերում ջեռուցման նպատակներով սովորաբար օգտագործվող սենքի տեղային տաքացուցիչների տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական հայեցակետերը վերլուծելու համար: Ուսումնասիրությունը կատարվել է Միության եւ երրորդ երկրների շահառուների ու շահագրգիռ կողմերի հետ համատեղ, եւ արդյունքները հասանելի են դարձել հանրությանը.
- 4) սույն կանոնակարգի նպատակներով էներգիայի սպառումն օգտագործման փուլում եւ պինդ մասնիկների (փոշու), օրգանական գազային միացությունների, շմոլ գազի, ազոտի օքսիդների արտանետումները սահմանվում են որպես պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների մասով բնապահպանական էական հարցադրում.
- 5) նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2009/125/ԵՀ հրահանգի I հավելվածի 1-ին մասում նշված՝ էկոնախագծման այլ պարամետրերի մասով պահանջները սենքի տեղային տաքացուցիչների դեպքում անհրաժեշտ չեն.
- 6) սույն կանոնակարգի գործողության ոլորտը պետք է ներառի պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչները, որոնք

նախատեսված են պինդ վառելիքով (կենսազանգված կամ հանածո վառելիք) աշխատելու համար: Սույն կանոնակարգի գործողության ոլորտում ընդգրկված են նաև պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային այն տաքացուցիչները, որոնք ունեն հեղուկ ջերմակրով տաքացման անուղղակի ֆունկցիոնալ հնարավորություններ: Պինդ վառելիքով աշխատող տեղային այն տաքացուցիչները, որոնք աշխատում են ոչ փայտե կենսազանգվածով, ունեն հատուկ տեխնիկական բնութագրեր եւ, հետեւաբար, սույն կանոնակարգի գործողության ոլորտը չի տարածվում դրանց վրա.

- 7) Միությունում պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների 2010 թվականի տարեկան էներգասպառումը, ըստ հաշվարկների, կազմել է 627 ՊՋ (15 մլն.տնհ), ինչը համարժեք է ածխածնի երկօքսիդի (CO_2) 9,5 մետրիկ տոննա արտանետմանը: Եթե հատուկ միջոցներ չձեռնարկվեն, ապա սենքի տեղային տաքացուցիչների տարեկան էներգասպառումը, ըստ կանխատեսումների, 2030 թվականին կկազմի 812 ՊՋ (19,4 մլն.տնհ), ինչը համարժեք է 8,8 մետրիկ տոննա CO_2 -ի.
- 8) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների էներգասպառումը կարող է կրճատվել՝ կիրառելով գոյություն ունեցող չարտոնագրված տեխնոլոգիաները՝ առանց այդ արտադրանքի գնման եւ շահագործման համակցված ծախսերն ավելացնելու.
- 9) պինդ մասնիկների (ՊՄ), օրգանական գազային միացությունների (ՕԳՄ-ներ) եւ ածխածնի մոնօքսիդի (CO) տարեկան արտանետումները, ըստ հաշվարկների, 2010 թվականին կկազմեն համապատասխանաբար 142 կիլոտոննա/տարի եւ 1 658 կիլոտոննա/տարի: Անդամ պետությունների կողմից ընդունված հատուկ միջոցների եւ տեխնոլոգիական զարգացումների արդյունքում ակնկալվում է, որ այդ արտանետումները 2030 թվականին կկազմեն համապատասխանաբար 94 կիլոտոննա/տարի, 49 կիլոտոննա/տարի եւ 1 433 կիլոտոննա/տարի: Հատուկ միջոցների բացակայության դեպքում ազոտի օքսիդների (NO_x) տարեկան

արտանետումները, ըստ կանխատեսումների, կաճեն, քանի որ սենքի տեղային նոր տաքացուցիչների նախագծումը հիմնված կլինի այրման ավելի բարձր ջերմաստիճանների վրա.

- 10) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների արտանետումները կարող են ավելի կրճատվել՝ կիրառելով գոյություն ունեցող չարտոնագրված տեխնոլոգիաները՝ առանց այդ արտադրանքի գնման եւ շահագործման համակցված ծախսերն ավելացնելու.
- 11) ակնկալվում է, որ սույն կանոնակարգով եւ Հանձնաժողովի 2015/1186 պատվիրակված կանոնակարգով (ԵՄ)¹ սահմանված՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջները միասին մինչեւ 2030 թվականը նախնական հաշվարկով հանգեցնելու են տարեկան մոտավորապես 41 ՊՋ (0,9 մլն.տնհ) էներգախնայողության, որը համապատասխանում է 0,4 մետրիկ տոննա CO₂-ին.
- 12) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների արտանետումների մասով սույն կանոնակարգով սահմանված՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջները մինչեւ 2030 թվականը կհանգեցնեն պինդ մասնիկների (ՊՄ), օրգանական գազային միացությունների (ՕԳՄ-ների) եւ ածխածնի մոնօքսիդի (CO) կրճատման՝ 27 կիլոտոննա/տարի, 5 կիլոտոննա/տարի եւ 399 կիլոտոննա/տարի, համապատասխանաբար.
- 13) սույն կանոնակարգով կարգավորվում է տարբեր տեխնիկական բնութագրերով արտադրանք: Եթե դրանց նկատմամբ ներկայացվեին արդյունավետության նույն պահանջները, ապա որոշ տեխնոլոգիաներ շուկայում կարգելվեին, ինչը կհանգեցներ սպառողների համար

¹ «Սենքի տեղային տաքացուցիչների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 24-ի 2015/1186 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 20-րդ էջը):

բացասական ազդեցության: Այս պատճառով յուրաքանչյուր տեխնոլոգիայի հնարավորությանն առնչվող էկոնախագծմանը ներկայացվող պահանջները շուկայում ստեղծում են հավասար պայմաններ:

- 14) էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք է ներդաշնակեցնեն Միության տարածքում պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների էներգասպառման, պինդ մասնիկների, օրգանական գազային միացությունների, ածխածնի մոնօքսիդի եւ ազոտի օքսիդների արտանետումների մասով պահանջները՝ ներքին շուկայի գործունեությունն ավելի լավացնելու համար եւ այդ արտադրանքի բնապահպանական ցուցանիշները բարելավելու նպատակով.
- 15) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների էներգաարդյունավետությունն իրական կյանքում շահագործելու ընթացքում նվազում է՝ համեմատած փորձարկման ժամանակ գրանցած էներգաարդյունավետությանը: Սենքի ջեռուցման համար էներգիայի սեզոնային արդյունավետությունն օգտակար էներգաարդյունավետությանը մոտեցնելու նպատակով պետք է խրախուսել, որ արտադրողներն օգտագործեն հսկողության միջոցներ: Այդ նպատակով, այս երկու արժեքների միջեւ տարբերության համար ենթադրվում է ընդհանուր զեղչ : Այդ զեղչը կարելի է վերականգնել՝ ընտրելով հսկողության մի շարք տարբերակներ.
- (16) էկոնախագծմանը ներկայացվող պահանջները չպետք է վերջնական սպառողի տեսանկյունից ազդեն պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների ֆունկցիոնալության եւ մատչելիության վրա եւ չպետք է բացասական ազդեցություն ունենան առողջության, անվտանգության կամ շրջակա միջավայրի վրա.
- 17) էկոնախագծմանը ներկայացվող պահանջները ներդնելու ժամկետը պետք է բավարար լինի, որպեսզի արտադրողներն իրենց արտադրանքը վերանախագծեն սույն կանոնակարգով սահմանված կարգով: Ժամկետով

պետք է հաշվի առնվի ծախսային ազդեցությունն արտադրողների, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների վրա՝ միեւնույն ժամանակ ապահովելով սույն կանոնակարգի նպատակների ժամանակին իրականացումը.

- 18) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչները կարգավորվում են ներդաշնակեցված ստանդարտներով, որոնք պետք է օգտագործվեն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 305/2011 Կանոնակարգի (ԵՄ)¹ 7-րդ հոդվածի համաձայն: Իրավական որոշակիության եւ պարզեցման նպատակներով՝ պատշաճ է, որ համապատասխան ներդաշնակեցված ստանդարտները վերանայվեն՝ սույն կանոնակարգով սահմանված՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջներն արտացոլելու նպատակով.
- 19) արտադրանքի պարամետրերը պետք է չափվեն եւ հաշվարկվեն՝ օգտագործելով հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդներ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդների, այդ թվում՝ առկայության դեպքում՝ Հանձնաժողովի պահանջի հիման վրա ստանդարտացման եվրոպական կազմակերպությունների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտների վրա՝ համաձայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1025/2012 (ԵՄ) կանոնակարգով սահմանված ընթացակարգերի².
- 20) 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ սույն կանոնակարգով սահմանվում են, թե համապատասխանության գնահատման որ ընթացակարգերն են կիրառելի.

¹ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2011 թվականի մարտի 9-ի «Շինարարական արտադրանքի մարկետինգի ներդաշնակեցված պայմաններ սահմանող եւ Խորհրդի 89/106/ԵՏՀ հրահանգն (ՊՏ L 88, 4.4.2011թ., էջ 5) ուժը կորցրած ճանաչող» թիվ 305/2011 կանոնակարգ (ԵՄ):

² Խորհրդի 89/686/ԵՏՀ եւ 93/15/ԵՏՀ հրահանգները եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 94/9/ԵՀ, 94/25/ԵՀ, 95/16/ԵՀ, 97/23/ԵՀ, 98/34/ԵՀ, 2004/22/ԵՀ, 2007/23/ԵՀ, 2009/23/ԵՀ եւ 2009/105/ԵՀ հրահանգները փոփոխող եւ Խորհրդի 87/95/ԵՏՀ որոշումը եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1673/2006/ԵՀ որոշումն ուժը կորցրած ճանաչող՝ «Եվրոպական ստանդարտացման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 316, 14.11.2012թ., էջ 12):

- 21) համապատասխանության ստուգումները դյուրացնելու նպատակով արտադրողները պետք է 2009/125/ԵՀ հրահանգի IV եւ V հավելվածներում նշված տեխնիկական փաստաթղթերում տեղեկություն տրամադրեն այն մասով, որով այդ տեղեկությունն առնչվում է սույն կանոնակարգով սահմանված պահանջներին.
- 22) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունն էլ ավելի նվազեցնելու համար արտադրողները պետք է տեղեկություն տրամադրեն դրանց կազմատման, վերաշրջանառության եւ դուրսգրման մասին.
- 23) ի լրումն սույն կանոնակարգով սահմանված՝ պարտադիր իրավական ուժ ունեցող պահանջների՝ գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների համար պետք է սահմանվեն կողմնորոշիչ հենանիշեր՝ պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների շահագործման ժամկետի ընթացքում դրանց բնապահպանական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հեշտ հասանելիությունը եւ մատչելիությունն ապահովելու համար.
- 24) սույն կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով սահմանված՝ Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են 50 կՎտ կամ դրանից ցածր նոմինալ ջերմային հզորությամբ պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների շուկայահանման եւ շահագործման էկոնախագծմանը ներկայացվող պահանջները:

2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետևյալի նկատմամբ՝

- ա) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային այն տաքացուցիչների, որոնք նախատեսված են միայն ոչ փայտային կենսազանգվածի այրման համար.
- բ) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային այն տաքացուցիչների, որոնք նախատեսված են միայն դրսում շահագործման համար.
- գ) նոմինալ ջերմային հզորության դեպքում պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային այն տաքացուցիչների, որոնց ուղղակի ջերմային հզորությունն ուղղակի կամ անուղղակի համակցված ջերմային հզորության 6%-ից պակաս է.
- դ) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային այն տաքացուցիչների, որոնք չեն հավաքվում գործարանում կամ չեն տրամադրվում մեկ արտադրողի կողմից՝ որպես տեղում հավաքվող պատրաստի բաղադրիչներ կամ մասեր.
- ե) օդատաքացուցիչների.
- զ) շոգեբաղնիքի վառարանների:

Հոդված 2

Սահմանումները

Ի հավելումն 2009/125/ԵՀ 2-րդ հոդվածում տրված սահմանումների՝ կիրառվում են նաև հետևյալ սահմանումները՝

- 1) «պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է սենքի ջեռուցման սարք, որը ջերմությունն անջատում է ուղղակի ջերմափոխանցման կամ հեղուկ ջերմակրին ջերմափոխանցման հետ համակցված ուղղակի ջերմափոխանցման միջոցով այն փակ տարածքում մարդկանց համար ջերմային հարմարավետության որոշակի մակարդակ

ապահովելու եւ պահպանելու նպատակով, որտեղ արտադրանքը տեղադրված է, եւ հնարավոր է՝ այլ տարածքներ ջերմահաղորդելու համար, եւ սարքավորված է մեկ կամ ավելի ջերմագեներատորներով, որոնք պինդ վառելիքներն ուղղակիորեն փոխակերպում են ջերմության.

- 2) «պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչ, որի վառելիքի այրվող շերտը եւ այրվող գազերը հերմետիկորեն առանձնացված չեն այն տարածքից, որտեղ տեղադրված է արտադրանքը, եւ որը հերմետիկորեն միացված է ծխատար խողովակին կամ բուխարու անցքին, կամ որը պահանջում է ծխանցքի առկայություն՝ այրման արգասիքների հեռացման համար.
- 3) «պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչ, որի վառելիքի այրվող շերտը եւ այրվող գազերը կարող են հերմետիկորեն առանձնացվել այն տարածքից, որտեղ տեղադրված է արտադրանքը, եւ որը հերմետիկորեն միացված է ծխատար խողովակին կամ բուխարու անցքին, կամ որը պահանջում է ծխանցքի առկայություն՝ այրման արգասիքների հեռացման համար.
- 4) «վառարան» նշանակում է պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչ, որը մեկ խցում ինտեգրում է պինդ վառելիքով աշխատող՝ տեղային տաքացուցչի գործառույթը, եւ եփման համար նախատեսված մակերես, ջեռոց կամ երկուսն էլ՝ սննդի պատրաստման համար, եւ որը հերմետիկորեն միացված է ծխատար խողովակին կամ բուխարիի անցքին կամ պահանջում է ծխանցքի առկայություն՝ այրման արգասիքների հեռացման համար.
- 5) «պինդ վառելիքով աշխատող՝ ծխանցք չունեցող՝ սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է պինդ վառելիքով աշխատող սենքի տեղային տաքացուցիչ, որն այրման արգասիքներն արտազատում է այն տարածք, որտեղ գտնվում է արտադրանքը.

- 6) «ծխատար խողովակին միացված՝ պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչ» նշանակում է պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչ, որը նախատեսված է ծխատար խողովակի տակ կամ բուխարում տեղադրման համար՝ հերմետիկորեն չփակելով արտադրանքի եւ ծխնելույզի կամ բուխարու անցքի միջեւ օդի հոսքը, եւ թույլ տալով, որ այրման արգասիքները վառելիքի այրվող հատվածից անարգել անցնեն ծխատար խողովակ կամ ծխանցք.
- 7) «շոգեբաղնիքի վառարան» նշանակում է պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչ, որը ներկառուցված է կամ հայտարարված է, որ նախատեսված է շահագործման համար չոր կամ թաց շոգեբաղնիքներում կամ նմանատիպ միջավայրերում.
- 8) «օդատաքացուցիչ» նշանակում է արտադրանք, որը ջերմությունը մատակարարում է միայն օդի հիմքով տաքացվող ջեռուցման համակարգին, որը կարող է մղվել, եւ նախատեսված է հատուկ տեղում ամրացված կամ պատի վրա տեղադրված շահագործման համար, որն օդը տեղաբաշխում է օդամղիչի միջոցով այն փակ տարածքում, որտեղ տեղակայված է արտադրանքը, մարդկանց համար ջերմային հարմարավետության որոշակի մակարդակ ապահովելու եւ պահպանելու համար.
- 9) «պինդ վառելիք» նշանակում է վառելիք, որը պինդ է սովորական սենյակային ջերմաստիճանում, այդ թվում՝ պինդ կենսազանգված եւ պինդ հանածո վառելիք.
- 10) «կենսազանգված» նշանակում է գյուղատնտեսական (ներառյալ՝ բուսական եւ կենդանական ծագման նյութերը), անտառաբուծության եւ հարակից արդյունաբերություններից, այդ թվում՝ ձկնաբուծությունից եւ ջրային կուլտուրաներից կենսաբանական ծագման արտադրանքի, թափոնների եւ մնացորդների կենսաքայքայվող մասը, ինչպես նաեւ արդյունաբերական եւ քաղաքային թափոնների կենսաքայքայվող մասը.

- 11) «փայտային կենսազանգված» նշանակում է կենսազանգված, որն առաջացել է ծառերից, թփերից ու թփուտներից, այդ թվում՝ գերաններից, փայտի տաշեղներից, պելետների տեսքով սեղմված փայտից, բրիկետների տեսքով սեղմված փայտից եւ փայտի թեփից.
- 12) «ոչ փայտային կենսազանգված» նշանակում է փայտային կենսազանգվածից բացի, այլ կենսազանգված, այդ թվում՝ ծղոտ, չինական եղեգ, եղեգի ցողուններ, հատիկներ, տակուծք, ձիթապտղի կորիզ, ձիթապտղի մամլած կենսազանգված եւ ընկուզեղենի կեղեւ.
- 13) «հանածո պինդ վառելիք» նշանակում է կենսազանգվածից բացի, այլ պինդ վառելիք, այդ թվում՝ անտրացիտ եւ չոր էներգետիկ ածուխ, պինդ կոքս, կիսակոքսը, բիտումային ածուխ, լիգնիտ, հանածո վառելիքների խառնուրդ կամ կենսազանգվածի եւ հանածո վառելիքի խառնուրդ. սույն կանոնակարգի նպատակներով այն ներառում է նաեւ տորֆ.
- 14) «նախընտրելի վառելիք» նշանակում է վառելիքի այն միակ տեսակը, որը, արտադրողի ցուցումների համաձայն, նախընտրելիորեն օգտագործվելու է սենքի տեղային տաքացուցչի մեջ.
- 15) «վառելիքի այլ համապատասխան տեսակներ» նշանակում է նախընտրելի վառելիքից բացի, այլ վառելիք, որը, մատակարարի ցուցումների համաձայն, կարող է օգտագործվել սենքի տեղային տաքացուցչի մեջ եւ ներառում է վառելիքի ցանկացած տեսակ, որը նշված է տեղադրողների եւ վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկում, արտադրողների եւ մատակարարների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերում, տեխնիկական կամ գովազդային նյութերում եւ գովազդներում.
- 16) «ուղղակի ջերմատվություն» նշանակում է արտադրանքի ջերմատվությունը ճառագայթման եւ ջերմափոխանակության միջոցով, որն օդ է արտազատվում արտադրանքի կողմից կամ հենց դրանից՝ բացառությամբ արտադրանքի ջերմատվությանը հեղուկ ջերմակրին՝ արտահայտված կՎտ-ով.

- 17) «անուղղակի ջերմատվություն» նշանակում է արտադրանքի ջերմատվությունը հեղուկ ջերմակրին ջերմության գեներացման նույն գործընթացի միջոցով, որով ապահովվում է արտադրանքի ուղղակի ջերմատվությունը՝ արտահայտված կՎտ-ով.
- 18) «անուղղակի ջեռուցման գործառույթ» նշանակում է, որ արտադրանքն ունակ է ընդհանուր ջերմատվության մի մասը հեղուկ ջերմակրին՝ տարածքի տաքացման կամ կենցաղային տաք ջրի ստացման նպատակով օգտագործման համար.
- 19) «նոմինալ ջերմատվություն» (*U_{nom}*) նշանակում է պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցչի՝ կՎտ-ով արտահայտված ջերմատվությունը, որը ներառում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ջերմատվություն (անհրաժեշտության դեպքում), եթե այն աշխատում է մատակարարի կողմից հայտարարված առավելագույն ջերմատվության ռեժիմով, որը կարող է պահպանվել տեսական ժամանակ.
- 20) «նվազագույն ջերմատվություն» (*U_{min}*) նշանակում է պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցչի ջերմատվությունը, որը ներառում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ջերմատվություն (անհրաժեշտության դեպքում), եթե այն աշխատում է մատակարարի կողմից հայտարարված նվազագույն ջերմատվության ռեժիմով՝ արտահայտված կՎտ-ով.
- 21) «նախատեսված բացօթյա տարածքում շահագործման համար» նշանակում է, որ արտադրանքը հարմար է փակ տարածքներից դուրս անվտանգ շահագործման, այդ թվում՝ բացօթյա պայմաններում հնարավոր օգտագործման համար.
- 22) «պինդ մասնիկներ» նշանակում է տարբեր ձեւ, կառուցվածք եւ խտություն ունեցող մասնիկներ, որոնք գազային փուլում ցրված են ծխային գազում.

23) «համարժեք մոդել» նշանակում է մոդել, որը շուկայահանվել է II հավելվածի 3-րդ կետի 1-ին աղյուսակում սահմանված տեխնիկական նույն պարամետրերով, ինչ միեւնույն արտադրողի կողմից շուկայահանված մեկ այլ մոդել:

II-V հավելվածների համար I հավելվածով սահմանված են լրացուցիչ սահմանումներ:

Հոդված 3

Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները եւ ժամանակացույցը

1. Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանված են II հավելվածով:
2. Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչները 2022 թվականի հունվարի 1-ից պետք է համապատասխանեն II հավելվածով սահմանված պահանջներին :
3. Էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համապատասխանությունը չափվում է հաշվարկվում է III հավելվածով սահմանված մեթոդներին համապատասխան:

Հոդված 4

Համապատասխանության գնահատումը

1. 2009/125/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգը տվյալ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է կամ տվյալ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:

2. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն համապատասխանության գնահատման նպատակներով, տեխնիկական փաստաթղթերը պետք է պարունակեն սույն կանոնակարգի II հավելվածի 3-րդ կետով սահմանված տեղեկությունները:
3. Եթե մոդելի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ այլ մոդելներից արտամիջարկման միջոցով կամ այդ երկու միջոցով էլ, ապա տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների կամ արտամիջարկումների կամ այդ երկուսի, ինչպես նաև արտադրողների կողմից կատարված փորձարկումների մանրամասները՝ կատարված հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար: Այդպիսի դեպքերում տեխնիկական փաստաթղթերը պետք է նաև ներառեն այն մոդելների ցանկը, որոնք հիմք են ծառայել արտամիջարկման համար, եւ բոլոր այլ մոդելների ցանկը, եթե տեխնիկական փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները ստացվել են նույն հիմքով:

Հոդված 5

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Սույն Կանոնակարգի II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով 2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի վերահսկողության ստուգումներն իրականացնելիս անդամ պետությունները կիրառում են սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված ստուգման ընթացակարգը:

Հոդված 6

Կողմնորոշիչ հենանիշերը

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա պինդ վառելիքով աշխատող՝ սենքի առավել արդյունավետ տեղային տաքացուցիչների հենանիշերը:

Հոդված 7

Վերանայումը

1. Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը՝ ելնելով տեխնոլոգիական առաջընթացից, եւ այդ վերանայման արդյունքը Խորհրդատվական ֆորում է ներկայացնում ոչ ուշ, քան մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը: Վերանայմամբ մասանավորապես գնահատվում է՝
 - թե արդյոք անհրաժեշտ է սահմանել էկոնախագծմանը ներկայացվող առավել խիստ պահանջներ էներգաարդյունավետության եւ պինդ մասնիկների (ՊՄ), օրգանական գազային միացությունների (ԳՕՄ-ներ), ածխածնի մոնօքսիդի, ինչպես նաեւ ազոտի օքսիդների (NO_x) արտանետումների համար.
 - թե արդյոք պետք է փոփոխել ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները:
2. Հանձնաժողովը վերանայում է, թե արդյոք անհրաժեշտ է պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար ներդնել երրորդ կողմի կողմից կատարվող սերտիֆիկացում, եւ այդ վերանայման արդյունքները ներկայացնում է Խորհրդատվական ֆորում ոչ ուշ, քան մինչեւ 2018 թվականի օգոստոսի 22-ը:

Հոդված 8

Անցումային դրույթներ

Մինչև 2022 թվականի հունվարի 1-ն անդամ պետությունները կարող են թույլատրել պինդ վառելիքով աշխատող՝ սենքի այն տեղային տաքացուցիչների շուկայահանումն ու շահագործումը, որոնք համապատասխանում են սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության, պինդ մասնիկների արտանետումների, օրգանական գազային միացությունների արտանետումների, ածխածնի մոնօքսիդի արտանետումների եւ ազոտի օքսիդների արտանետումների վերաբերյալ գործող ազգային դրույթներին:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2015 թվականի ապրիլի 24-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժան-Կլոդ ԶՈՒՆԿԵՐ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***II-V հավելվածների նպատակներով կիրառվող սահմանումները**

II-V հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

- 1) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն» (դ.) նշանակում է պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցչի միջոցով մատակարարվող՝ սենքի ջեռուցման պահանջարկի եւ այդ պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ տարեկան էներգասպառման միջեւ հարաբերակցությունը՝ արտահայտված տոկոսով.
- 2) «փոխարկման գործակից» (ՓԳ) նշանակում է գործակից, որն արտացոլում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012/27/ԵՄ հրահանգում նշված՝ ԵՄ-ում էլեկտրաէներգիայի արտադրության օգտակար գործողության միջին գործակցի գնահատված 40%-ը¹. փոխարկման գործակցի արժեքն է՝ $\Phi = 2,5$.
- 3) «պինդ մասնիկների արտանետումներ» նշանակում է պինդ մասնիկների արտանետումները նոմինալ ջերմատվության դեպքում՝ արտահայտված մգ/մ³ չոր ծխագազով՝ հաշվարկվածեւ 13% թթվածնի (O₂) դեպքում 273 Կ-ի եւ 1 013 միլիբարի նկատմամբ, կամ մինչեւ չորս այրման արագության դեպքում պինդ մասնիկների միջին կշռված արտանետումը՝ արտահայտված գ/կգ չոր մասնիկներով.
- 4) «ածխածնի մոնօքսիդի արտանետումներ» նշանակում է ածխածնի մոնօքսիդի արտանետումները նոմինալ ջերմատվության դեպքում՝ արտահայտված մգ/մ³ ծխագազով՝ հաշվարկված 13% թթվածնի (O₂) դեպքում 273 Կ եւ 1 013 միլիբարի նկատմամբ.

¹2009/125/ԵՀ եւ 2010/30/ԵՄ հրահանգները փոփոխող եւ 2004/8/ԵՀ եւ 2006/32/ԵՀ հրահանգներն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «էներգախնայողության մասին» 2012 թվականի հոկտեմբերի 25-ի 2012/27/ԵՄ հրահանգ (ՊՏ L 315, 14.11.2012թ., էջ 1):

- 5) «օրգանական գազային միացությունների արտանետումներ» նշանակում է օրգանական գազային միացությունների արտանետումները նոմինալ ջերմատվության դեպքում՝ արտահայտված մգC/մ³ ծխագազով՝ հաշվարկված 13% թթվածնի (O₂) դեպքում 273 Կ եւ 1 013 միլիբարի նկատմամբ.
- 6) «ազոտի օքսիդների արտանետումներ» նշանակում է ազոտի օքսիդների արտանետումները նոմինալ ջերմատվության դեպքում՝ արտահայտված մգ/մ³ ծխագազով՝ արտահայտված որպես NO₂՝ հաշվարկված 13% թթվածնի (O₂) դեպքում 273 Կ եւ 1 013 միլիբարի նկատմամբ .
- 7) «նվազագույն ջերմատվության արժեք» (ՆՋԱ) նշանակում է վառելիքի միավոր քանակի կողմից անջատված ընդհանուր այն ջերմաքանակը, որը պարունակում է վառելիքի համապատասխան խոնավություն, երբ այն ամբողջությամբ այրվում է թթվածնի հետ, եւ երբ այրման արգասիքները չեն վերադառնում շրջակա միջավայրի ջերմաստիճանին.
- 8) «օգտակար արդյունավետությունը նոմինալ կամ նվազագույն ջերմատվության դեպքում» (համապատասխանաբար՝ դ_{ջ,անվան.} կամ դ_{ջ,նվազ.}) նշանակում է օգտակար ջերմատվության եւ ընդհանուր սպառվող էներգիայի հարաբերակցությունը՝ արտահայտված պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցչի ՆՋԱ-ով՝ արտահայտված տոկոսներով.
- 9) «էլեկտրաէներգիային ներկայացվող պահանջը նոմինալ ջերմատվության դեպքում» (է_{լատավ.}) նշանակում է էլեկտրաէներգիայի սպառումը պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցչի կողմից նոմինալ ջերմատվությունն ապահովելիս: Էլեկտրաէներգիայի սպառումը սահմանվում է առանց հաշվի առնելու շրջապատիչի էներգասպառումն այն դեպքում, երբ արտադրանքն առաջարկում է անուղղակի ջեռուցման գործառույթ եւ սարքավորված է շրջապատիչով՝ արտահայտված կՎտ-ով.
- 10) «էլեկտրաէներգիային ներկայացվող պահանջը նոմինալ ջերմատվության դեպքում» (է_{լսվազ.}) նշանակում է էլեկտրաէներգիայի սպառումը պինդ

վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցչի կողմից նոմինալ ջերմատվությունն ապահովելիս: Էլեկտրաէներգիայի սպառումը սահմանվում է առանց հաշվի առնելու շրջապատիչի էներգասպառումն այն դեպքում, երբ արտադրանքն առաջարկում է անուղղակի ջեռուցման գործառույթ եւ սարքավորված է շրջապատիչով՝ արտահայտված կՎտ-ով.

- 11) «Էլեկտրաէներգիային ներկայացվող պահանջը սպասման ռեժիմում» (էլ_{սպ.}) նշանակում է արտադրանքի էլեկտրաէներգիայի սպառումը սպասման ռեժիմում՝ արտահայտված կՎտ-ով.
- 12) «մշտական բռնկման բոցի հզորությանը ներկայացվող պահանջ» (U_{բռնկ.}) նշանակում է նոմինալ կամ մասնակի ջերմային բեռնվածության համար անհրաժեշտ առավել հզոր այրման գործընթացի բոցավառման աղբյուր հանդիսացող կրակի ապահովման համար պինդ վառելիքով աշխատող արտադրանքի վառելիքի սպառումը՝ արտահայտված կՎտ-ով, երբ նախքան հիմնական այրիչի միանալն այն վառվում է ավելի, քան 5 րոպե.
- 13) «միափուլ ջերմատվությունն առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման» նշանակում է, որ արտադրանքն ունակ չէ իր ջերմատվությունն ինքնաբար փոփոխելու, եւ որ առկա չէ սենյակային ջերմաստիճանի հետադարձ կապի մեխանիզմ՝ ջերմատվությունն ինքնաբար հարմարեցնելու համար.
- 14) «երկու կամ ավելի փուլեր՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման» նշանակում է, որ արտադրանքն ունակ է ջերմատվության երկու կամ ավելի մակարդակների միջոցով իր ջերմատվությունը ձեռքով կարգավորելու եւ սարքավորված չէ այնպիսի սարքով, որն ինքնաբար կարգավորում է ջերմատվությունը՝ կապված անհրաժեշտ սենյակային ջերմաստիճանի հետ.
- 15) «սենյակային ջերմաստիճանի մեխանիկական թերմոստատով կարգավորմամբ» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ոչ էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրանքը

որոշակի ժամանակահատվածի ընթացքում ինքնաբար փոփոխի իր ջերմատվությունը՝ կապված փակ տարածքում ջեռուցման պահանջվող որոշակի հարմարավետության հետ.

- 16) «սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորմամբ» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ներկառուցված կամ արտաքին մակերեսին տեղադրված էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրանքը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ինքնաբար փոփոխի իր ջերմատվությունը՝ կապված սենյակային ջեռուցման հարմարավետության պահանջվող որոշակի մակարդակի հետ.
- 17) «սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորմամբ եւ սարքի ինքնաբար միանալու մեկօրյա ժամակարգավորիչով» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ներկառուցված կամ արտաքին մակերեսին ամրացված էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրանքը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ինքնաբար փոփոխի իր ջերմատվությունը՝ կապված փակ տարածքում ջեռուցման հարմարավետության պահանջվող որոշակի մակարդակի հետ, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս ժամակարգավորիչի 24-ժամյա միջակայքի համար սահմանել ժամանակն ու ջերմաստիճանի մակարդակը.
- 18) «սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորմամբ եւ շաբաթական ժամակարգավորիչով» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ներկառուցված կամ արտաքին մակերեսին տեղադրված էլեկտրոնային սարքով, որը հնարավորություն է տալիս, որ արտադրանքը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ինքնաբար փոփոխի իր ջերմատվությունը՝ կապված փակ տարածքում ջեռուցման հարմարավետության պահանջվող որոշակի մակարդակի հետ, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս մեկ լրիվ շաբաթվա համար սահմանել ժամանակն ու ջերմաստիճանի մակարդակ: 7-օրյա ժամանակահատվածում կարգավորումները պետք է օրական կտրվածքով փոփոխելու հնարավորություն տան.

- 19) «սենյակային ջերմաստիճանի կարգավորում՝ ներկայության հայտնաբերմամբ» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ներկառուցված կամ արտաքին մակերեսին տեղադրված էլեկտրոնային սարքով, որն ինքնաբար նվազեցնում է տրված սենյակային ջերմաստիճանը, եթե սենյակում որեւէ անձ չի հայտնաբերվում.
- 20) «սենյակային ջերմաստիճանի կարգավորում՝ բաց լուսամուտի հայտնաբերմամբ» նշանակում է, որ արտադրանքը սարքավորված է ներկառուցված կամ արտաքին մակերեսին տեղադրված էլեկտրոնային սարքով, որը նվազեցնում է ջերմատվությունը, երբ լուսամուտ կամ դուռ է բացվում: Երբ լուսամուտի կամ դռան բացվելը հայտնաբերելու համար օգտագործվում է սենսոր, այն կարող է տեղադրվել արտադրանքի հետ, արտադրանքի արտաքին մակերեսին, ներկառուցվել շենքի կառուցվածքի մեջ կամ որպես այդ տարբերակների համակցություն.
- 21) «կարգավորման հեռակառավարման հնարավորությամբ» նշանակում է այն գործառույթը, որը հնարավորություն է տալիս այն շենքից, որտեղ տեղադրված է արտադրանքը, դուրս գտնվելու պայմաններում հեռահար կապի մեջ գտնվել արտադրանքի հետ.
- 22) «միափուլ» նշանակում է, որ արտադրանքն ունակ չէ իր ջերմատվությունն ինքնաբար փոխելու.
- 23) «երկփուլ» նշանակում է, որ արտադրանքն ունակ է իր ջերմատվությունն ինքնաբար կարգավորելու երկու տարբեր մակարդակներում՝ կապված փակ տարածքում օդի իրական եւ ցանկալի ջերմաստիճանների հետ, որոնք կարգավորվում են ջերմաստիճանի սենսորային սարքերի եւ միջերեսի միջոցով, որը պարտադիր չէ, որ լինի արտադրանքի անբաժանելի մասը.
- 24) «փոփոխող» նշանակում է, որ արտադրանքն ունակ է իր ջերմատվությունն ինքնաբար կարգավորել երեք կամ ավելի տարբեր մակարդակներում՝ կապված փակ տարածքում օդի իրական եւ ցանկալի ջերմաստիճանների

հետ, որոնք կարգավորվում են ջերմաստիճանի սենսորային սարքերի եւ միջերեսի միջոցով, որը պարտադիր չէ, որ լինի արտադրանքի անբաժանելի մասը.

- 25) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ արտադրանքը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, նախատեսված ձեռով աշխատելու համար կախված է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող էներգիայից եւ ապահովում է հետեւյալ գործառույթները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակահատվածով՝ վերաակտիվացման գործառույթ կամ վերաակտիվացման գործառույթ եւ միայն վերաակտիվացման գործառույթի ակտիվացման նշում եւ (կամ) տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում.
- 26) «այլ հանածո վառելիք» նշանակում է անտրացիտից եւ չոր էներգետիկ ածուխից, պինդ կոքսից, կիսակոքսից, բիտումային ածուխից, լիգնիտից, տորֆից կամ հանածո վառելիքի խառնուրդից պատրաստված բրիկետներից բացի, այլ հանածո վառելիք.
- 27) «այլ փայտային կենսազանգված» նշանակում է 25% կամ դրանից ցածր խոնավության պարունակությամբ գերաններից, 14%-ից ցածր խոնավությամբ բրիկետացված վառելիքից կամ 12%-ից ցածր խոնավությամբ սեղմված փայտից բացի, այլ փայտային կենսազանգված.
- 28) «մոդելի նույնականացուցիչ» նշանակում է այն ծածկագիրը, որը սովորաբար տառաթվային է, որով պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցչի կոնկրետ մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ արտադրողի այլ մոդելներից.
- 29) «խոնավության պարունակություն» նշանակում է վառելիքում ջրի զանգվածը կապված պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցչում օգտագործվող վառելիքի ընդհանուր զանգվածի հետ :

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Էկոնախազժմանը ներկայացվող պահանջները****1. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությանը ներկայացվող հատուկ պահանջները**

ա) Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչները 2022 թվականի հունվարի 1-ից պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

i) պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 30%-ից պակաս լինի.

ii) պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 65%-ից պակաս լինի.

iii) որպես վառելիք պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով գազային կամ հեղուկ վառելիք օգտագործող սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 79%-ից պակաս լինի.

iv) վառարանների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 65%-ից պակաս լինի:

2. Արտանետումներին ներկայացվող էկոնախազժման հատուկ պահանջները

ա) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչներից առաջացող պինդ մասնիկների (ՊՄ) արտանետումները

2022 թվականի հունվարի 1-ից չպետք է գերազանցեն հետևյալ արժեքները.

- i) պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների կողմից ՊՄ-ի արտանետումները 13% թթվածնի (O_2) առկայության դեպքում չպետք է գերազանցեն $50մգ/մ^3$ -ը, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(1) կետում նկարագրված մեթոդին համապատասխան, կամ $6գ/կգ$ -ը (չոր մասնիկ), եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(2) կետում նկարագրված մեթոդին համապատասխան.
- ii) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես նաև վառարանների կողմից ՊՄ-ի արտանետումները 13% թթվածնի (O_2) առկայության դեպքում չպետք է գերազանցեն $40մգ/մ^3$ -ը, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(1) կետում նկարագրված մեթոդին համապատասխան, կամ չեն գերազանցում $5գ/կգ$ -ը (չոր մասնիկ), եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(2) կետում նկարագրված մեթոդին համապատասխան, կամ կենսազանգվածի համար՝ $2,4գ/կգ$ -ը (չոր մասնիկ), կամ պինդ հանածո վառելիքի համար՝ $5,0գ/կգ$ -ը (չոր մասնիկ), եթե չափումներն իրականացվել են III հավելվածի 4(ա)(i)(3) կետում նկարագրված մեթոդին համապատասխան.
- iii) որպես վառելիք պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող՝ պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների կողմից ՊՄ-ի արտանետումները 13% թթվածնի (O_2) առկայության դեպքում չեն գերազանցում $20մգ/մ^3$ -ը, եթե չափումներն իրականացվել են III հավելվածի 4(ա)(i)(1) կետում նկարագրված մեթոդին

համապատասխան, կամ չեն գերազանցում 2,5գ/կգ-ը (չոր մասնիկ), եթե չափումներն իրականացվել են III հավելվածի 4(ա)(i)(2) կետում նկարագրված մեթոդին համապատասխան, կամ 1,2գ/կգ-ը (չոր մասնիկ), եթե չափումներն իրականացվել են 4(ա)(i)(3) կետում նկարագրված մեթոդին համապատասխան.

- բ) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչներից առաջացող օրգանական գազային միացությունների (ՕԳՄ-ներ) արտանետումները 2022 թվականի հունվարի 1-ից չպետք է գերազանցեն հետևյալ արժեքները.
- i) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես նաև վառարանների կողմից ՕԳՄ-ների արտանետումները 13% O_2 -ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն 120մգC/մ³-ը.
 - ii) որպես վառելիք պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների կողմից ՕԳՄ-ների արտանետումները 13% O_2 -ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն 60մգC/մ³ -ը.
- գ) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչներից առաջացող շնուլ գազի (CO) արտանետումները 2022 թվականի հունվարի 1-ից չպետք է գերազանցեն հետևյալ արժեքները.
- i) պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների կողմից շնուլ գազի (CO) արտանետումները 13% O_2 -ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն 2 000մգ/մ³ ը.

- ii) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես նաև վառարանների կողմից CO-ի արտանետումները 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն 1,500մգ/մ³-ը.
 - iii) որպես վառելիք պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների կողմից CO-ի արտանետումները 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն 300մգ/մ³-ը.
- դ) պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչներից առաջացող ազոտի օքսիդների (NO_x) արտանետումները 2022 թվականի հունվարի 1-ից չպետք է գերազանցեն հետևյալ արժեքները.
- i) որպես վառելիք կենսազանգված օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների եւ վառարանների կողմից NO_x-ի արտանետումները 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն 200մգ/մ³-ը՝ արտահայտված NO₂-ով.
 - ii) պինդ հանածո վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների եւ վառարանների կողմից 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն 300մգ/մ³-ը՝ արտահայտված NO₂-ով:

3. Արտադրանքի տեխնիկական բնութագրին ներկայացվող պահանջները

- ա) 2022 թվականի հունվարի 1-ից պետք է տրամադրվեն պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների հետեւյալ տեխնիկական բնութագրերը.
- i) տեղադրողների եւ վերջնական սպառողների համար ցուցումների ձեռնարկները, ինչպես նաեւ արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների եւ ներկրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերում պետք է ներառվեն հետեւյալ տարրերը.
 - 1) 1-ին աղյուսակում ներառված տեղեկությունները՝ III հավելվածին համապատասխան չափված եւ հաշվարկված տեխնիկական պարամետրերի հետ միասին, որոնք ցույց են տալիս աղյուսակում նշված կարեւոր թվերի քանակը.
 - 2) ցանկացած հատուկ նախազգուշական միջոց, որը պետք է ձեռնարկել պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցչի հավաքման, տեղադրման կամ սպասարկման համար.
 - 3) շահագործման ժամկետի ավարտից հետո քանդման, վերամշակման եւ (կամ) դուրսգրման մասին տեղեկություններ.
 - ii) 4-րդ հոդվածի համաձայն համապատասխանության գնահատման նպատակով՝ տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն հետեւյալ տարրերը.
 - 1) «ա» կետում նշված տարրերը.
 - 2) անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մոդելների ցանկը.
 - 3) եթե նախընտրելի վառելիքն այլ փայտային կենսազանգված է, ոչ փայտային կենսազանգված, այլ հանածո վառելիք կամ

կենսազանգվածի եւ հանածո վառելիքի այլ խառնուրդ՝ ինչպես նշված է 1-ին աղյուսակում, ապա վառելիքի նկարագրությունը, որը բավարար է դրա միանշանակ նույնականացման համար, եւ վառելիքի տեխնիկական ստանդարտը կամ մասնագիրը, այդ թվում՝ խոնավության չափված պարունակությունը եւ մոխրի չափված պարունակությունը, իսկ այլ հանածո վառելիքի համար՝ նաեւ վառելիքի ցնդող նյութի չափված պարունակությունը.

բ) 2020 թվականի հունվարի 1-ից պետք է տրամադրվեն պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների հետեւյալ տեխնիկական բնութագրերը.

i) միայն ծխատար անցք չունեցող՝ սենքի տեղային տաքացուցիչների եւ ծխատար անցք ունեցող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար. վերջնական սպառողների համար ցուցումների ձեռնարկը, արտադրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերը եւ արտադրանքի փաթեթավորումը պետք է ներառեն հետեւյալ նախադասությունն այնպես, որ ապահովվի պարզ տեսանելիություն եւ ընթեռնելիություն, ինչպես նաեւ այն լեզվով, որը հեշտությամբ հասկացվի այն անդամ պետության վերջնական սպառողների կողմից, որտեղ արտադրանքը շուկայահանվում է՝ «Այս արտադրանքը հարմար չէ առաջնային տաքացման նպատակներին».

- 1) վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկի դեպքում այս նախադասությունը պետք է լինի ձեռնարկի շապիկի վրա.
- 2) արտադրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերի դեպքում այս նախադասությունը պետք է ներկայացված լինի արտադրանքի այլ բնութագրերի հետ միասին.

Բիտումային ածուխ	[այո/ոչ]	[այո/ոչ]								
Լիգնիտի բրիկետներ	[այո/ոչ]	[այո/ոչ]								
Տորֆի բրիկետներ	[այո/ոչ]	[այո/ոչ]								
Հանածո վառելիքի խառնուրդի բրիկետներ	[այո/ոչ]	[այո/ոչ]								
Հանածո այլ վառելիք	[այո/ոչ]	[այո/ոչ]								
Կենսազանգվածի եւ հանածո վառելիքի խառնուրդի բրիկետներ	[այո/ոչ]	[այո/ոչ]								
Կենսազանգվածի եւ պինդ վառելիքի այլ խառնուրդ	[այո/ոչ]	[այո/ոչ]								

Բնութագրերը միայն նախընտրելի վառելիքով աշխատելիս

Կետ	Պայման անշան	Արժեք	Միավոր	Կետ	Պայման անշան	Արժեք	Միավոր
Ջերմատվություն				Օգտակար էներգաարդյունավետություն (ստացված ԱՏՋ)			
Նոմինալ ջերմատվություն	Ա _{նոմ.}	x	կՎտ	Օգտակար էներգաարդյունավետությունը նոմինալ ջերմատվության դեպքում	η _{th,նոմ.}	x,x	%
Նվազագույն ջերմատվություն (հենանիշը)	Ա _{նվազ.}	[x,x/առկա չէ]	կՎտ	Օգտակար էներգաարդյունավետությունը նվազագույն ջերմատվության դեպքում (հենանիշը)	η _{th,նվազ.}	[x,x/առկա չէ]	%
Էլեկտրաէներգիայի լրացուցիչ սպառում				Ջերմատվության/սենյակային ջերմաստիճանի վերահսկման տեսակը (ընտրել մեկը)			
Նոմինալ ջերմատվության դեպքում	է _{լառավ.}	x,xxx	կՎտ	Միափուլ ջերմատվություն՝ առանց սենյակային ջերմաստիճանը կարգավորելու հնարավորության		[այո/ոչ]	
Նվազագույն ջերմատվության դեպքում	է _{լնվազ.}	x,xxx	կՎտ	Ծեռքով կարգավորվող երկու կամ ավելի փուլեր՝ առանց սենյակային ջերմաստիճանը կարգավորելու հնարավորության		[այո/ոչ]	
Սպասման ռեժիմում	է _{լտ.}	x,xxx	կՎտ	սենյակային ջերմաստիճանի՝ մեխանիկական թերմոստատով կարգավորման հնարավորությամբ		[այո/ոչ]	
Մշտական բռնկման բոցի հզորությանը ներկայացվող պահանջը				սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով		[այո/ոչ]	

Բռնկման բոցի հզորությանը ներկայացվող պահանջը (անհրաժեշտության դեպքում)	Մշտ ^{բնկ.}	x,xxx Առկա չէ	կՎտ	սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով գումարած մեկօրյա ժամակարգավորիչով	[այո/ոչ]
				սենյակային ջերմաստիճանի կարգավորման էլեկտրոնային մեխանիզմով գումարած շաբաթական ժամակարգավորիչով	[այո/ոչ]
				Կարգավորման այլ տարբերակներ (հնարավոր է բազմատարբերակ ընտրություն)	
				սենյակային ջերմաստիճանի կարգավորմամբ՝ ներկայության հայտնաբերմամբ	[այո/ոչ]
				սենյակային ջերմաստիճանի կարգավորմամբ՝ բաց լուսամտի հայտնաբերմամբ	[այո/ոչ]
				հեռակառավարման հնարավորությամբ	[այո/ոչ]

Կոնտակտային տվյալները Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը եւ հասցեն:

(*) ՊՄ՝ պինդ մարմին, ՕԳՄ-ներ՝ օրգանական գազային միացություններ, CO՝ ածխածնի մոնօքսիդ, NO_x՝ ազոտի օքսիդներ

(**): Պահանջվում են միայն այն դեպքում, եթե կիրառվում են F(2) կամ F(3) ճշգրտման

գործակիցները:

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Չափումները եւ հաշվարկները**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով իրականացվում են չափումներ եւ հաշվարկներ՝ ներդաշնակեցված ստանդարտների կիրառմամբ, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*, կամ այլ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Դրանք պետք է համապատասխանեն 2-5-րդ կետերում սահմանված պայմաններին:

2. Չափումների եւ հաշվարկների ընդհանուր պայմանները

- ա) Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչները պետք է փորձարկվեն II հավելվածի 1-ին աղյուսակում նշված նախընտրելի վառելիքի եւ ցանկացած այլ համապատասխան վառելիքի համար:
- բ) Նոմինալ ջերմատվության եւ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության հայտարարված արժեքները պետք է կլորացվեն մինչեւ ամենամոտ մեկ տասնորդական նիշը:
- գ) Արտանետումների հայտարարված արժեքները պետք է կլորացվեն մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

3. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության ընդհանուր պայմանները

- ա) Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը (η_s) պետք է հաշվարկվի՝ հիմք ընդունելով ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային

ջեռուցման էներգաարդյունավետությունը(η_{ս,միացվ.})՝ ճշգրտված ներդրումներով, որոնց համար հաշվի են առնվում ջերմատվության հսկողությունը, լրացուցիչ էլեկտրաէներգիայի սպառումը եւ մշտական բռնկման բոցի էներգիայի սպառումը:

բ) էլեկտրաէներգիայի սպառումը պետք է բազմապատկվի փոխակերպման 2,5 գործակցով (Φ_Գ):

4. Արտանետումների ընդհանուր պայմանները

ա) Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար չափումները պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով պինդ մասնիկների (ՊՄ), օրգանական գազային միացությունների (ՕԳՄ), ածխածնի մոնօքսիդի (CO) եւ ազոտի օքսիդների (NO_x) արտանետումները, որոնք չափվում են միմյանց եւ սենքի ջեռուցման էներգաարդյունավետության հետ միաժամանակ՝ բացառությամբ ՊՄ-ի, եթե կիրառվում են 4(ա)(i)(2) կամ 4(ա)(i)(3) մեթոդները.

i) ՊՄ-ի արտանետումների չափման համար թույլատրվում է երեք մեթոդ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական պահանջները, սակայն անհրաժեշտ է կիրառել այդ մեթոդներից միայն մեկը.

1) ՊՄ-ի չափումն իրականացվում է տաքացված գոտիչից չոր ծխազազի նմուշի նմուշառման միջոցով: ՊՄ-ի չափումը, ինչպես չափված է սարքի այրման արտադրանքում, պետք է իրականացվի այն ժամանակ, երբ արտադրանքն ապահովում է իր նոմինալ հզորությունը եւ, անհրաժեշտության դեպքում, մասնակի բեռնման պայմաններում.

2) ՊՄ-ի չափում՝ այրման ամբողջ ցիկլի ընթացքում նոսրացված ծխազազից բնական օդափոխության օգտագործման

միջոցով ծխագազի մասնակի նմուշի նմուշառման միջոցով եւ օգտագործելով խառնման խողովակի առավելագույն ծախսը, եւ զտիչ՝ շրջակա միջավայրի ջերմաստիճանում.

- 3) ՊՄ-ի չափում՝ 30 րոպե տեւողությամբ ժամանակահատվածում նոսրացված ծխագազից ֆիքսված ձգածողի օգտագործմամբ 12 Պա ճնշմամբ ծխագազի նմուշի նմուշառման միջոցով եւ օգտագործելով նոսրացման խողովակի առավելագույն ծախսը, եւ զտիչ՝ շրջակա միջավայրի ջերմաստիճանում:
- ii) ՕԳՄ-ի չափումը, ինչպես չափված է սարքի այրման արտադրանքում, պետք է լինի լուծազտող ու շարունակական եւ հիմնված բոցի իոնիզացման հայտնաբերիչի օգտագործման վրա: Ստացված արդյունքն արտահայտվում է ածխածնի միլիգրամներով: ՕԳՄ-ի չափումը, ինչպես չափված է սարքի այրման արտադրանքում, պետք է իրականացվի այն ժամանակ, երբ արտադրանքն ապահովում է իր նոմինալ հզորությունը եւ, անհրաժեշտության դեպքում, մասնակի բեռնման պայմաններում:
- iii) CO-ի չափումը, ինչպես չափված է սարքի այրման արտադրանքում, պետք է լինի լուծազտիչ ու շարունակական եւ հիմնված ինֆրակարմիր հայտնաբերիչի օգտագործման վրա: CO-ի չափումը, ինչպես չափված է սարքի այրման արտադրանքում, պետք է իրականացվի այն ժամանակ, երբ արտադրանքն ապահովում է նոմինալ հզորություն եւ, անհրաժեշտության դեպքում, մասնակի բեռնման պայմաններում:
- iv) NO_x-ի չափումը, ինչպես չափված է սարքի այրման արտադրանքում, պետք է լինի լուծազտիչ ու շարունակական եւ հիմնված քեմիլյումինեսցենտ մեթոդով հայտնաբերման վրա: Ազոտի օքսիդների արտանետումները պետք է չափվեն որպես

ազոտի մոնօքսիդի եւ ազոտի երկօքսիդի հանրագումար եւ արտահայտվեն ազոտի դիօքսիդով: NO_x-ի չափումը, ինչպես չափված է սարքի այրման արտադրանքում, պետք է իրականացվի այն ժամանակ, երբ արտադրանքն ապահովում է նոմինալ հզորություն եւ, անհրաժեշտության դեպքում, մասնակի բեռնման պայմաններում:

- բ) Նոմինալ ջերմատվության, սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության եւ արտանետումների հայտարարված արժեքները պետք է կլորացվեն մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

5. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության հատուկ պայմանները

- ա) Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը սահմանվում է հետևյալ եղանակով՝

$$\eta_u = \eta_{u, \text{միացվ.}} - 10\% + F(2) + F(3) - F(4) - F(5)$$

որտեղ՝

- $\eta_{u, \text{միացվ.}}$ -ը սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գործակիցն է՝ արտահայտված %-ով, հաշվարկված 5(բ) կետով սահմանված կարգով.
- $F(2)$ -ը ճշգրտման գործակիցն է, որի համար հաշվի է առնվում դրական ներդրումը սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ՝ փակ տարածքներում ջեռուցման հարմարավետության ճշգրտված ներդրումների հետեւանքով՝ արտահայտված տոկոսներով, որի արժեքներն անհամատեղելի են եւ չեն կարող գումարվել միմյանց.

- $F(3)$ -ը ճշգրտման գործակիցն է, որի համար հաշվի է առնվում դրական ներդրումը սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ՝ փակ տարածքներում ջեռուցման հարմարավետության ճշգրտված ներդրումների հետեւանքով՝ արտահայտված տոկոսներով, որի արժեքները կարող են գումարվել միմյանց.
 - $F(4)$ -ը ճշգրտման գործակիցն է, որի համար հաշվի է առնվում էլեկտրաէներգիայի օժանդակ սպառման բացասական ներդրումը սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ՝ արտահայտված տոկոսներով.
 - $F(5)$ -ը ճշգրտման գործակիցն է, որի համար հաշվի է առնվում մշտական բռնկման բոցի բացասական ներդրումը սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ՝ արտահայտված տոկոսներով:
- բ) Ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը հաշվարկվում է հետեւյալ եղանակով՝

$$\eta_{u,mhagv} = \eta_{th,umf}.$$

որտեղ՝

- $\eta_{th,umf}$ -ը նոմինալ ջերմատվության դեպքում օգտակար էներգաարդյունավետությունն է՝ հիմնված ԱՅՋ-ի վրա:
- գ) $F(2)$ ճշգրտման գործակիցը, որի համար հաշվի է առնվում դրական ներդրումը սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ՝ փակ տարածքներում ջեռուցման հարմարավետության հսկողության ճշգրտված ներդրումների հետեւանքով՝ արտահայտված տոկոսներով, որի արժեքներն անհամատեղելի են կամ չեն կարող գումարվել միմյանց, հաշվարկվում է հետեւյալ եղանակով՝

պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար F(2) ճշգրտման գործակիցը հավասար է 2-րդ աղյուսակին համապատասխան գործակիցներից մեկին՝ կախված նրանից, թե կարգավորման որ բնութագիրն է կիրառվում: Կարող է ընտրվել միայն մեկ արժեք:

Աղյուսակ 2

F(2) ճշգրտման գործակիցը

Եթե արտադրանքը սարքավորված է եւ (կարող է կիրառվել միայն մեկ տարբերակ)	F(2)
միափուլ ջերմատվություն՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության	0,0%
ձեռքով կարգավորվող երկու կամ ավելի փուլեր՝ առանց սենյակային ջերմաստիճանի կարգավորման հնարավորության	1,0%
սենյակային ջերմաստիճանի կարգավորման մեխանիկական թերմոստատով	2,0%
սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորման հնարավորությամբ	4,0%
սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորման հնարավորությամբ՝ գումարած մեկօրյա ժամակարգավորիչ	6,0%
սենյակային ջերմաստիճանի էլեկտրոնային կարգավորման հնարավորությամբ՝ գումարած շաբաթական ժամակարգավորիչ	7,0%

Արտանետումների վերաբերյալ II հավելվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին չհամապատասխանող՝ պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար F(2)-ը պետք է լինի զրո, եթե ջերմակարգավորիչը դրված է նվազագույն ջերմատվության վրա: Այս կարգավորման դեպքում ջերմատվությունը չպետք է լինի նոմինալ ջերմատվության 50%-ից ավելի:

դ) F(3) ճշգրտման գործակիցը, որի համար հաշվի է առնվում դրական ներդրումը սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մեջ՝ փակ տարածքներում ջեռուցման հարմարավետության ճշգրտված

ներդրումների հետեանքով, որի արժեքները կարող են գումարվել միմյանց, հաշվարկվում է հետեյալ եղանակով՝

պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար F(3) ճշգրտման գործակիցը հավասար է 3-րդ աղյուսակին համապատասխան արժեքների հանրագումարին՝ կախված նրանից, թե կարգավորման որ բնութագիրն (բնութագրերն) է կիրառվում:

Աղյուսակ 3

F(3) ճշգրտման գործակիցը

Եթե արտադրանքը սարքավորված է եւ (կարող են կիրառվել մի քանի տարբերակներ)՝	F(3)
սենյակային ջերմաստիճանի կարգավորում՝ ներկայության հայտնաբերիչով	1,0%
սենյակային ջերմաստիճանի կարգավորում՝ բաց լուսամուտի հայտնաբերիչով	1,0%
հեռակառավարման հնարավորությամբ	1,0%

Արտանետումների վերաբերյալ II հավելվածի 2-րդ կետում սահմանված պահանջներին չհամապատասխանող՝ պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների համար F(3)-ը պետք է լինի զրո, եթե ջերմակարգավորիչը դրված է նվազագույն ջերմատվության վրա: Այս կարգավորման դեպքում ջերմատվությունը չպետք է լինի նոմինալ ջերմատվության 50%-ից ավելի:

ե) Էլեկտրաէներգիայի օժանդակ սպառման F(4) ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետեյալ եղանակով՝

ճշգրտման այս գործակցի համար հաշվի է առնվում էլեկտրաէներգիայի օժանդակ սպառումն աշխատանքի եւ սպասման ռեժիմներում.

$$F(4) = \Phi \cdot \frac{0,2 \cdot \xi_{\text{տառվ.}} + 0,8 \cdot \xi_{\text{նվազ.}} + 1,3 \cdot \xi_{\text{տն.}}}{U_{\text{տն.}}} \cdot 100[\%]$$

որտեղ՝

- $E_{\text{առավ.}}$ -ն էլեկտրաէներգիայի սպառումն է նոմինալ ջերմատվության դեպքում՝ արտահայտված կՎտ-ով.
 - $E_{\text{նվազ.}}$ -ն էլեկտրաէներգիայի սպառումն է նվազագույն ջերմատվության դեպքում՝ արտահայտված կՎտ-ով: Այն դեպքում, երբ արտադրանքը չի առաջարկում նվազագույն ջերմատվություն, պետք է օգտագործվի էլեկտրաէներգիայի սպառման արժեքը նոմինալ ջերմատվության դեպքում.
 - $E_{\text{տ.}}$ -ն արտադրանքի էլեկտրաէներգիայի սպառումն է սպասման ռեժիմում՝ արտահայտված կՎտ-ով.
 - $U_{\text{նմ.}}$ -ն արտադրանքի նոմինալ ջերմատվությունն է՝ արտահայտված կՎտ-ով:
- զ) Մշտական բռնկման բոցի էներգասպառման հետ կապված $F(5)$ ճշգրտման գործակիցը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝
- ճշգրտման այս գործակցի համար հաշվի է առնվում մշտական բռնկման բոցի հզորությանը ներակայացվող պահանջը.

$$F(5) = 0,5 \cdot \frac{U_{\text{բռնկ.}}}{U_{\text{նմ.}}} \cdot 100[\%]$$

որտեղ՝

- $U_{\text{բռնկ.}}$ -ը բռնկման բոցի սպառումն է՝ արտահայտված կՎտ-ով.
 - $U_{\text{նմ.}}$ -ն արտադրանքի նոմինալ ջերմատվությունն է՝ արտահայտված կՎտ-ով:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող
ստուգման ընթացակարգը**

Սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով 2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի վերահսկողության նպատակով ստուգումներ իրականացնելիս անդամ պետությունների մարմինները կիրառում են սույն կանոնակարգի IV հավելվածով սահմանված ստուգումների ընթացակարգը.

1. Անդամ պետությունների մարմինները փորձարկում են յուրաքանչյուր մոդելի մեկ միավոր: Միավորը փորձարկվում է մեկ կամ ավելի վառելիքով, որն ունի նմանատիպ բնութագրեր, ինչ այն վառելիքը (վառելիքները), որոնք արտադրողի կողմից օգտագործվել են III հավելվածին համապատասխան չափումներ կատարելու համար:
2. Մոդելը համարվում է սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
 - ա) հայտարարված արժեքները համապատասխանում են II հավելվածով սահմանված պահանջներին.
 - բ) սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը η_u հայտարարված արժեքից ցածր է ոչ ավելի, քան 5%-ով.
 - գ) հետեւյալի արտանետումները՝
 - 1) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես նաեւ վառարանների դեպքում պինդ մասնիկների (ՊՄ)

արտանետումները 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն հայտարարված արժեքն ավելի, քան 20մգ/մ³-ով, եւ 13% O₂-ի առկայության դեպքում ավելի, քան 10մգ/մ³-ով՝ պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(1) կետում նկարագրված մեթոդին համապատասխան, կամ ավելի, քան 1գ/կգ-ով, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(2) կետում նկարագրված մեթոդին համապատասխան, կամ ավելի, քան 0,8գ/կգ-ով, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(3) կետում նկարագրված մեթոդին համապատասխան.

- 2) պելետների տեսքով սեղմված փայտից բացի այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես նաեւ վառարանների դեպքում օրգանական գազային միացությունները (ՕԳՄ-ները) 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն հայտարարված արժեքն ավելի, քան 25մգC/մ³-ով, եւ 13% O₂-ի առկայության դեպքում ավելի, քան 15մգC/մ³-ով՝ պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում.
- 3) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես նաեւ վառարանների դեպքում ածխածնի մոնօքսիդը (CO) 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցի հայտարարված արժեքն ավելի, քան 275մգ/մ³-ով, եւ ավելի, քան 60մգ/մ³-ով՝

պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում.

- 4) ազոտի օքսիդները (NO_x) չպետք է գերազանցեն հայտարարված արժեքն ավելի, քան 3մգ/մ^3 -ով 13% O_2 -ի առկայության դեպքում՝ արտահայտված NO_2 -ով:

3. Եթե 2(ա) կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող: Եթե 2(բ) կամ 2(գ) կետերում նշված արդյունքներից որեւէ մեկը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները պետք է փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրեն նույն մոդելի երեք լրացուցիչ միավոր: Որպես այլընտրանք՝ ընտրված երեք լրացուցիչ միավորները կարող են լինել մեկ կամ ավելի համարժեք մոդելներից, որոնք արտադրողի տեխնիկական փաստաթղթերում թվարկվել են որպես համարժեք արտադրանք:

4. Մոդելը պետք է համարվի սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝

- ա) երեք լրացուցիչ միավորների հայտարարված արժեքները համապատասխանում են II հավելվածով սահմանված պահանջներին.

- բ) երեք լրացուցիչ միավորների՝ *η_u* սենքի սեզոնային ջեռուցման միջին արդյունավետությունը հայտարարված արժեքից պակաս չէ ավելի, քան 5% -ով.

- գ) երեք լրացուցիչ միավորներից առաջացող արտանետումների միջինը՝

- 1) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես

նաեւ վառարանների դեպքում պինդ մասնիկների (ՊՄ) արտանետումները 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն հայտարարված արժեքն ավելի, քան 20մգ/մ³-ով, եւ 13% O₂-ի առկայության դեպքում ավելի, քան 10մգ/մ³-ով՝ պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(1) կետում նկարագրված մեթոդին համապատասխան, կամ ավելի, քան 1գ/կգ-ով, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(2) կետում նկարագրված մեթոդին համապատասխան, կամ ավելի, քան 0,8գ/կգ-ով, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(3) կետում նկարագրված մեթոդին համապատասխան.

- 2) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես նաեւ վառարանների դեպքում օրգանական գազային միացությունները (ՕԳՄ-ները) 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցեն հայտարարված արժեքն ավելի, քան 25մգC/մ³-ով, եւ 13% O₂-ի առկայության դեպքում ավելի, քան 15մգC/մ³-ով՝ պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում .
- 3) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես նաեւ վառարանների դեպքում ածխածնի մոնօքսիդը (CO) 13% O₂-ի առկայության դեպքում չպետք է գերազանցի հայտարարված

արժեքն ավելի, քան 275մգ/մ^3 -ով, եւ ավելի, քան 60մգ/մ^3 -ով՝ պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում.

- 4) ազոտի օքսիդները (NO_x) չպետք է գերազանցեն հայտարարված արժեքն ավելի, քան 3մգ/մ^3 -ով 13% O_2 -ի առկայության դեպքում՝ արտահայտված NO_2 -ով:

5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող:

Անդամ պետությունների մարմինները մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին են տրամադրում փորձարկման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ:

6. Անդամ պետությունների մարմիններն օգտագործում են III հավելվածով սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածով սահմանված՝ փորձարկման առավելագույն թույլատրելի շեղումները վերաբերում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից չափված պարամետրերի փորձարկմանը եւ չպետք է օգտագործվեն մատակարարի կողմից՝ որպես տեխնիկական փաստաթղթերում արժեքներ սահմանելու համար թույլատրելի շեղումներ:

*ՀԱՎԵԼՎԱԾ V***6-րդ հոդվածում նշված կողմնորոշիչ հենանիշերը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին սենքի սեզոնային ջեռուցման էներգաաարդյունավետության պինդ մասնիկների, ածխածնի մոնօքսիդի, օրգանական գազային միացությունների եւ ազոտի օքսիդների արտանետումների առումով որպես շուկայում առկա լավագույն տեխնոլոգիա սահմանվել է հետեւյալը: Սույն կանոնակարգի ուժի մեջ մտնելու պահին պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային ոչ մի տաքացուցիչ չի սահմանվել որպես 1-5-րդ կետերում նշված բոլոր արժեքներին համապատասխանող: Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային մի քանի տաքացուցիչներ համապատասխանել են այս արժեքներից մեկին կամ մի քանիսին.

1. պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի ջեռուցման էներգաաարդյունավետության հատուկ հենանիշերը՝
 - ա) պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի ջեռուցման էներգաաարդյունավետության հենանիշը՝ 47%.
 - բ) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի ջեռուցման էներգաաարդյունավետության հենանիշը՝ 86%.
 - գ) պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների՝ սենքի ջեռուցման էներգաաարդյունավետության հենանիշը՝ 94%.
 - դ) պինդ վառելիքով աշխատող վառարանների՝ սենքի ջեռուցման էներգաաարդյունավետության հենանիշը՝ 75%:

2. Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների կողմից պինդ մասնիկների (ՊՄ) արտանետումների հատուկ հենանիշերը՝
- ա) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, ինչպես նաև վառարանների՝ ՊՄ-ի արտանետումների հենանիշը՝ 13% O₂-ի առկայության դեպքում 20մգ/մ³, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(1) կետում նկարագրված մեթոդին համապատասխան.
 - բ) պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների՝ ՊՄ-ի արտանետումների հենանիշը՝ 13% O₂-ի առկայության դեպքում 10մգ/մ³, եթե չափումն իրականացվել է III հավելվածի 4(ա)(i)(1) կետում նկարագրված մեթոդին համապատասխան:
3. Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների օրգանական գազային միացությունների (ՕԳՄ-ներ) արտանետումների հատուկ հենանիշերը՝
- ա) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում ՕԳՄ-ների արտանետումների հենանիշը՝ 13% O₂-ի առկայության դեպքում 30մգ/մ³.
 - բ) պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում ՕԳՄ-ների արտանետումների հենանիշը՝ 13% O₂-ի առկայության դեպքում 10մգ/մ³:

4. Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների ածխածնի մոնօքսիդի (CO) արտանետումների հատուկ հենանիշերը՝

ա) պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների եւ կողմից CO-ի արտանետումների հենանիշը՝ 13% O₂-ի առկայության դեպքում 500մգ/մ³.

բ) սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների եւ կողմից CO-ի արտանետումների հենանիշը՝ 13% O₂-ի առկայության դեպքում 250մգ/մ³:

5. Պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային տաքացուցիչների կողմից ազոտի օքսիդների (NO_x) արտանետումների հատուկ հենանիշերը՝

ա) պինդ վառելիքով աշխատող՝ բաց առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների եւ վառարանների կողմից NO_x-ի արտանետումների հենանիշը՝ 13% O₂-ի առկայության դեպքում 50մգ/մ³:

Պարտադիր չէ, որ 1-5-րդ կետերում նշված հենանիշերը ենթադրեն, որ այդ արժեքների համակցությունը հնարավոր է ապահովել պինդ վառելիքով աշխատող՝ սենքի տեղային միայն մեկ տաքացուցչի դեպքում:

Պելետների տեսքով սեղմված փայտից բացի, այլ պինդ վառելիք օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում համադրման լավ օրինակ է սենքի սեզոնային ջեռուցման 83% արդյունավետությամբ, 13% O₂ առկայության դեպքում պինդ մասնիկների 33մգ/մ³ արտանետումներով, 13% O₂-ի առկայության դեպքում օրգանական գազային միացությունների 69մգ/մ³

արտանետումներով, 13% O₂ -ի առկայության դեպքում ածխածնի մոնօքսիդի 1 125մգ/մ³ արտանետումներով եւ 13% O₂-ի առկայության դեպքում ազոտի օքսիդների 115մգ/մ³ արտանետումներով առկա մոդելը:

Պելետների տեսքով սեղմված փայտ օգտագործող, պինդ վառելիքով աշխատող՝ փակ առաջամասով սենքի տեղային տաքացուցիչների դեպքում համադրման լավ օրինակ է 13% O₂-ի առկայության դեպքում պինդ մասնիկների 22մգ/մ³ արտանետումներով, 13% O₂-ի առկայության դեպքում օրգանական գազային միացությունների 6մգ/մ³ արտանետումներով, 13% O₂-ի առկայության դեպքում ազոտի օքսիդների 121մգ/մ³ արտանետումներով առկա մոդելը:

Վառարանների դեպքում համադրման լավ օրինակ է սենքի սեզոնային ջեռուցման 78% արդյունավետությամբ, 13% O₂-ի առկայության դեպքում պինդ մասնիկների 38մգ/մ³ արտանետումներով, 13% O₂-ի առկայության դեպքում օրգանական գազային միացությունների 66մգ/մ³ արտանետումներով, 13% O₂ -ի առկայության դեպքում ածխածնի մոնօքսիդի 1 375մգ/մ³ արտանետումներով եւ 13% O₂-ի առկայության դեպքում ազոտի օքսիդների 71մգ/մ³ արտանետումներով առկա մոդելը:
